ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի 2010թ. նոյեմբերի 5-ի

Ներկա էին՝ պատմ. գիտ. թեկն. **Անուշավան եպս. Ժամկոչյան** (խորհրդի նախագահ), պատմ. գիտ. թեկն., ասիստ. **Ա. Յ. Բալյան** (խորհրդի քարտուղար), պատմ. գիտ. թեկն., դոց. **Ա. Է. Հովհաննիսյան**, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Ռ. Հ. Վարդանյան,** իր. գիտ. դոկտ., պրոֆ. **Գ. Ս. Ղազինյան,** պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Հ. Գ. Ավետիսյան,** պատմ. գիտ. դոկտ. **Լ. Ա. Սարգսյան,** փիլ. գիտ. թեկն., դոց. **Ա. Գ. Քալաշյան,** փիլ. գիտ. թեկն., ասիստ. **Գ. Ա. Սարգսյան,** փիլ. գիտ. դոկտ. **Հ. Հ. Քեռսեյան,** ասիստ. **Ժ. Վ. Պապոյան,** պատմ. գիտ. թեկն. **Ս. Ս. Մկրտչյան,** պատմ. գիտ. թեկն., ասիստ. **Ա. Գ. Մանուչարյան,** դսխ. **Գ. Հ. Ղուշչյան,** ասպիրանտ **Ա. Մ. Մարմարյան,** ուսանող **Լ. Ռ. Ադամյան:**

1. **ԼՍԵՑԻՆ**. – Աստվածաբանության ֆակուլտետի դեկան պ.գ.թ. Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը (զեկ.՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Ռ. Հ. Վարդանյան):

Զեկուցողը նշեց, որ Աստվածաբանության ամբիոնը 2010թ. հոկտեմբերի 25-ի նիստում քննարկել է Աստվածաբանության ֆակուլտետի դեկան պ.գ.թ. Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը, և հաշվի առնելով, որ հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ) ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, պատմ. գիտ. թեկն. Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանին երաշխավորել է դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և **միջնորդել է ֆակուլտետի մրցութային հանձնաժողովին ու խորհրդին՝ առաջարկելով հաստատել ամբիոնի նիստի որոշումը և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ պատմ. գիտ. թեկն.** Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանին **շնորհել դոցենտի գիտական կոչում** (ամբիոնի նիստի արձանագրության քաղվածքը կցվում է):

Աստվածաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովը 2010 թ. նոյեմբեր 4-ի նիստում քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը, արձանագրել է հետևյալը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ) ենթակետը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող բուհում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Աստվածաբանության ֆակուլտետի դեկան պ.գ.թ. Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանի գիտական կոչում շնորհող բուհում՝ ԵՊՀ-ում, հինգերորդ տարին անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Դոցենտի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման և ՀՀ ԲՈՀ-ի նորմատիվ այլ ակտերի պարտադիր պահանջներից է նաև թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում առնվազն 3 հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքների առկայությունը:

Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո (2004թ.) Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանը Հայ եկեղեցու պատմության և կանոնական իրավունքի ոլորտում հրատարակել է գիտական 8 հոդված, 3 մենագրություն և ուսումնամեթոդական 1 ձեռնարկ:

Պատմ. գիտ. թեկն. Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանի գիտամանկավարժական բարձր որակի և հմտության անառարկելի վկայություններից մեկն էլ **դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ անցկացված ուսանողական հարցումներն են**, **որի միջինը կազմում է մոտ 4,9 բալ**:

Հաշվի առնելով այդ ամենը՝ Աստվածաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովն արձանագրում է, որ **Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանը լիովին արժանի է դոցենտի գիտական կոչման, և առաջարկում է ֆակուլտետի խորհրդին՝ նրան շնորհել դոցենտի գիտական կոչում:**

Այնուհետև պրոֆ. Ռ. Հ. Վարդանյանը ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի քննարկմանը դրեց Աստվածաբանության ֆակուլտետի **դեկան Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանին** դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - **պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Լ. Ա. Սարգսյանը,** դոց. **Ժ. Վ. Պապոյան,** փիլ. գիտ. դոկտ., դոց. **Հ. Հ. Քեռսեյան,** պրոֆ **Ռ. Հ. Վարդանյան:**

Արտահայտվողները միահամուռ կերպով առաջարկեցին Աստվածաբանության ֆակուլտետի **դեկան Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանին** դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

Խորհուրդը բաց քվեարկությամբ, միաձայն որոշեց փակ (գաղտնի) քվեարկության դնել Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և միաձայն հաստատեց հաշվիչ հանձնաժողովի (հանձնաժողովի նախագահ՝ դոցենտ, Հ. Հ. Քյոսեյան հանձնաժողովի անդամներ՝ դսխ. Ա. Մ. Օհանջանյան, ասպիրանտ Ա. Մ. Մարմարյան) կազմը:

Անցկացվեց փակ գաղտնի քվերակություն:

ԼՍԵՑԻՆ. - Հաշվիչ հանձնաժողովի նախագահ փիլ. գիտ. դոկտ., դոց. Հ. Հ. Քեոսեյանի հաղորդումը փակ գաղտնի քվեարկության արդյունքների մասին:

Դոց. Հ.Հ. Քյոսեյանը նշեց,որ խորհրդի 17 անդամներից ներկա էին 16-ը և քվեարկությանը մասնակցել են 16-ը: Բաժանվել է 16 քվեաթերթիկ: Քվեատուփում հայտնաբերվել է 16 քվեաթերթիկ:

Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար քվեարկել են՝

կողմ	-	16
դեմ	-	չկա
անվավեր քվեաթերթիկ	-	չկա

Այսպիսով, ամփոփեց հանձնաժողովի նախագահը, փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

ՈՐՈՇԵՑԻՆ. – 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ (կցվում է),

2. հաշվի առնելով, որ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001 թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ) ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին՝

ա) պատմական գիտությունների թեկնածու Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանին երաշխավորել դոցենտի գիտական կոչում ստանալու համար,

բ) միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ Աստվածաբանության ֆակուլտետի Հ դեկան Անուշավան եպս. (Անդրանիկ) Ժամկոչյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

Այնուհետև լսեցին Աստվածաբանության ֆակուլտետի երաշխավորման«Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության» ամբիոնի «Ակնարկներ հայ եկեղեցու պատմության » և «Կրոնի պատմության և տեսության» ամբիոնի «Կրոնը և քաղաքացիական հասրակաությունը Հայստանում» գիտական թեմաների և հաստատման հարցը (զեկ.՝ պ.գ.թ. Ս. Մկրտչյան և փ.գ.թ. Ա. Քալաշյան):

Զեկուցողները խորհրդի նիստի քննարկմանը ներկայացրին «Ակնարկներ հայ եկեղեցու պատմության» և «Կրոնը և քաղաքացիական հասրակաությունը Հայստանում» թեմաները՝ նշելով, որ այս աշխատանքները գիտական մեծ արժեք են ներկայացնում ինչպես պատմական, այնպես էլ տեսական և կիրառական տեսանկյուններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - պ.գ.դ. Լ. Ա. Սարգսյան, պ.գ.թ. Անուշավան եպս. Ժամկոչյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել «Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության» ամբիոնի «Ակնարկներ հայ եկեղեցու պատմության » և «Կրոնի պատմության և տեսության» ամբիոնի «Կրոնը և քաղաքացիական հասրակաությունը Հայստանում» գիտական թեմաները և երաշղավորել այն ներկայացնելու ՀՀ ԿԳՆ Գիտության Պետական Կոմիտե:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **պ.գ.թ. դոցենտ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՊՍ ԺԱՄԿՈՉՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **պ.գ.թ. Ա. Յ. ԲԱԼՅԱՆ**